

Հետաքրքիր է իմանալ

Չի կարելի պնդել, թե շփման ուժը միշտ բացասական աշխատանք է կատարում: Որոշակի պայմաններում այն կարող է լինել դրական և փակ հետագծով շարժվելիս շփման ուժի կատարած ընդհանուր աշխատանքը կարող է ընդունել դրական արժեքներ կամ հավասար լինել զրոյի: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ շփման ուժը միշտ հակառակ է ուղղված հավող մարմինների հարաբերական արագությանը և կարող է ուղղված լինել մարմնի շարժման ուղղությամբ, եթե շփվող մյուս մարմինը, որից ազդում է շփման ուժը, շարժվում է նույն ուղղությամբ՝ ավելի մեծ արագությամբ: Այդ դեպքում շփման ուժի աշխատանքը կլինի դրական: